ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ. Բ. ՂԱՐԻՐՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ բղթակից-անդամ

«...Կովկասի սոցիալ-տնտեսական կյանքի հատուկ պայմանները նպաստել են այնտեղ մեր կուսակցության ամենամարտական կազմակերպություն ստեղծելուն»:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Մարքսիստական գրականության մեջ Վ. Ի. Լենինն առաջինն էր, որ տվեց ետռեֆորմյան շրջանի Կովկասի սոցիալ-տնտեսական և քաղաքական զրության խորը գիտական վերլուծությունը։

Սկսած XIX դարի կեսերից, ռուս ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր ժամանակաշրջաններում, Անդրկովկասի ժողովուրդներն ու նրանց լավագույն զավակները միշտ եղել են այդ պայքարի առաջավոր շարքերում, խորապես գիտակցելով, որ Ռուսաստանի կայսրության մեջ մտնող բոլոր ժողովուրդների թշնամին մեկն է՝ ցարական ինքնակալությունը, կալվածատիրական, բուրժուական կարգերն ու նրանց պաշտպանները։

Անդրկովկասի ժողովուրդների առաջավոր զավակները իրենց երկրի ազատագրության հարցը կապում էին ռուսական հեղափոխության հաղթանակի հետ և զինվորագրվում այդ հեղափոխությանը։

Վ. Ի. Լենինը 1912 թ. մատնանշել է ռուսական հեղափոխության մեջ գործող երեք սերունդ, երեք դասակարգ, որոնք ազդել են հասարակական մտքի վրա՝ սկզբում ազնվականներն ու կալվածատերերը, դեկաբրիստներն ու Գերցենը[1] (մոտավորապես 1825 թ. մինչև 1861 թ.), ապա հեղափոխական-ռազնոչինցիները՝ Չերնիշևսկուց մինչև «Նարոդնայա վոլյա»-ի հերոսները (մոտավորապես 1861 թվականից մինչև 1895 թ.) և վերջապես պրոլետարիատը, մինչև վերջը հեղափոխական միակ դասակարգը, որի պատմական ասպարեզ գալով 1895 թվականից սկսվում է Ռուսաստանում ազատագրական շարժման երրորդ գլխավոր էտապը։ Նախորդների դասերով հարստացած, գրում էր Վ. Ի. Լենինը, «պրոլետարիատս իրեն ճանապարհ կբանա բոլոր երկրների սոցիալիստական բանվորների հետ ազատ դաշինք կնքելու համար, ճզմելով-ոչնչացնելով այն գարշելուն, ցարական միապետությանը...»[2]։

Անդրկովկասի ժողովուրդների զավակները կանգնած են եղել ռուսական հեղափոխության բոլոր երեք սերունդների շարքերում, նրանց հետ միասին պայքարել են ընդհանուր ազատագրության համար։ Նրանք եղել են Գերցենի և Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի, ռուս հեղափոխական նարոդնիկնե-

---

1 *Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 20։*

2 *Տե՛ս նույն տեղում, նաև՝ էջ 21, հ. 20, էջ 297։*

րի հավատարիմ զինակիցները։ Հենց այդ էլ նրանց օրինաչափորեն հասցրեց հեղափոխական պայքարի բարձրագույն՝ պրոլետարական շրջանին, որն սկսվելով XIX դարի վերջից և անցնելով երեք հեղափոխությունների բովով 1917 թ. հասցրեց կատարյալ հաղթանակի՝ ցարիզմի և բուրժուազիայի տապալմանը և Ռուսաստանում բանվոր դասակարգի դիկտատուրայի հաղթանակին։

Ռուսական առաջավոր միտքը, հեղափոխական-դեմոկրատական և ապա պրոլետարական շարժումը խոր ազդեցություն գործեցին Անդրկովկասի հասարակական կյանքի վրա։ Այդ ազդեցությունը ուժեղանալով վերածվում է սոցիալական ու ազգային ճնշման դեմ մղվող ազատագրական ընդհանուր պայքարի, համառուսաստանյան հեղափոխական շարժման ընդհանուր ճակատի։

XIX դարի 70—80-ական թվականներին Անդրկովկասում սկսվող բանվորական շարժումը դառնում էր ցարական ինքնակալության ու բուրժուազիայի դեմ Ռուսաստանի պրոլետարիատի հերոսական պայքարի անխզելի մասը։

*

Կովկասի հետռեֆորմյան ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմանների խորը վերլուծությունը Վ. Ի. Լենինը տվել է դեռ 90-ական թվականներին գրած իր աշխատություններում։ Այդ այն տարիներն էին, երբ հեղափոխական շարժումների կենտրոնը Արևմուտքից տեղափոխվում է Ռուսաստան, որտեղ բանվորական շարժման զարգացման պայմաններում սկիզբ էր դրվում մարքսիզմի զարգացման նոր, լենինյան էտապին։

1893 թ. գարնանը Սամարայում Վ. Ի. Լենինը ավարտում է «Տնտեսական նոր շարժումներ գյուղացիական կյանքում» հոդվածը, որը նրա պահպանված գրական աշխատություններից առաջինն էր։ Նույն թվականին նա գրում է «Այսպես կոչված շուկաների հարցի առթիվ» վերնագրով ռեֆերատը, իսկ մեկ տարի անց՝ «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» և «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ. Ստրուվեի գրքում» աշխատությունները, որոնք ուղղված էին նարոդնիկների և «լեգալ մարքսիստների» դեմ։ Դրանց մեջ տրված է XIX դարի վերջի Ռուսաստանի հասարակական-քաղաքական իրավակարգի մարքսիստական վերլուծությունը։ 1897 թ. Վ. Ի. Լենինը գրում է «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» բրոշյուրը, որում ընդհանրացված է Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» գործունեության փորձը և հիմնավորված է Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական ծրագիրն ու տակտիկան։

«Մենք Մարքսի թեորիայի վրա,— գրում էր Լենինը 1899 թվականին,— բնավ էլ չենք նայում որպես մի ինչ-որ ավարտուն և անձեռնմխելի բանի. մենք համոզված ենք, ընդհակառակը, որ այն դրել է միայն անկյունաքարերն այն գիտության, որը սոցիալիստները պետք է առաջ շարժեն բոլոր ուղղություններով, եթե նրանք չեն ցանկանում կյանքից ետ մնալ։ Մենք կարծում ենք, որ ռուս սոցիալիստների համար հատկապես անհրաժեշտ է Մարքսի թեորիայի ինքնուրույն մշակումը, որովհետև այդ թեորիան տալիս է միայն ընդհանուր ղեկավար գրույթներ, որոնք կիրառվում են մասնավորապես Անգլիայի նկատմամբ այլ կերպ, քան Ֆրանսիայի նկատմամբ, Ֆրանսիայի նկատմամբ այլ

կերպ, քան Գերմանիայի նկատմամբ, Գերմանիայի նկատմամբ այլ կերպ, քան Ռուսաստանի նկատմամբ»[3]։

Լենինը ցույց տվեց Մարքսի տեսության ինքնուրույն մշակման հիանալի օրինակ։ 1899 թ. սկզբին Լենինն ավարտեց «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» կլասիկ աշխատությունը, որը մարքսիստական ուսմունքի հանճարեղ կիրառումն էր Ռուսաստանի տնտեսակարգի վերլուծության նկատմամբ։

Իր գրքի երկրորդ հրատարակության առաջաբանում Լենինը նշում է, որ նրա մեջ տնտեսական հետազոտության ու վիճակագրական տեղեկությունների քննական վերլուծության հիման վրա տրված է հասարակական տնտեսակարգի, հետևաբար և Ռուսաստանի դասակարգային կառուցվածքի վերլուծությունը[4]։

Գրքի վրա աշխատելիս, որն սկսվել էր 1893 թ., Լենինը ուսումնասիրել, մշակել և օգտագործել էր հսկայական քանակությամբ գրականություն և զանազան վիճակագրական տվյալներ նաև Կովկասի, նրա առանձին նահանգների, մարզերի, քաղաքների և գյուղերի մասին։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լենինի կատարած նշումները և հաշվարկումներն այնպիսի հրատարակությունների վրա, ինչպիսին են «Военно-статистический сборник», I, вы. IV. Россия. Под общей редакцией Н. Н. Обручева. СПб., 1871), նարոդնիկ պրոֆեսոր Ն. Կորիշևի «Материалы по русскому народному хозяйству», «Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1890 г. заводском году, в 1901—1902 гг. (СПб., изд. Горного ученого ком., 1892—1905), Դ. Ի. Շիշմարյովի «Краткий очерк промышленности в районе Нижегородской и Шуйско-Ивановской жел. дор. (СПб., 1892) և այլն։

Գրքում օգտագործված են Կովկասի տնտեսական զարգացման վերաբերյալ հարուստ տվյալներ պարունակող բազմաթիվ հոդվածներ և ժողովածուներ՝ Կ. Խատիսովի «Кустарные промыслы Закавказского края», Պ. Օստրյակովի «Заметки о кустарной промышленности Кабарды, Терской области, на Кавказе», «Ежегодник Министерства финансов», вып. I, VIII, X, XII, СПб., 1869—1882 և այլ հրատարակություններ[5]։

Վերոհիշյալ և բազմաթիվ այլ նյութերի մանրազնին և քննադատական վերլուծման հիման վրա, Վ. Ի. Լենինը հասարակական մտքի պատմության մեջ առաջին անգամ տալիս է Կովկասում և նրա առանձին վայրերում՝ Բաքվում և Բաքվի նահանգում, Թիֆլիսում և Թիֆլիսի, Քութաիսի, Երևանի ու Ելիզավետպոլի նահանգներում, Կարսի մարզում, տեղական ֆաբրիկաներում և գործարաններում, գյուղական շրջաններում կապիտալիզմի և ազգարային հարաբերությունների գիտական մարքսիստական վերլուծությունը, ցույց է տալիս Կովկասում աշխատավոր մասսաների ազատագրական պայքարի սոցիալ-քաղաքական նախադրյալները։

Գյուղացիական ռեֆորմն Անդրկովկասում անցկացվեց ուշացումով՝ 1864—1870 թթ. և կալվածատերերի համար ավելի ձեռնտու պայմաններով, քան կենտրոնական Ռուսաստանում։ Անդրկովկասի հողային ֆոնդի 70,8 տոկոսը

---

3 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 4, էջ 262։

4 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 13։

5 Տե՛ս В. И Ленин, Полн. собр. соч., т. 3, стр. 331, 594 և այլն։

պատկանում էր կալվածատերերին և ցարական կառավարությանը, մինչդեռ գյուղացիության հիմնական մասսան տառապում էր հողազրկությունից։

Չնայած ճորտատիրության բազմաթիվ մնացորդներին, կապիտալիստական հարաբերությունները Անդրկովկասում արագորեն զարգանում էին։

Ցույց տալով Ուրալում և Ռուսաստանի հարավում հանքարդյունաբերության արագ աճի և բանվորների թվի ավելացման պրոցեսը, Վ. Ի. Լենինը նշում է. «Հարավի հետ միասին պետք է հիշատակել նաև Կովկասի մասին, որը նույնպես հանքարդյունաբերության զարմանալի աճումով է բնորոշվում հետռեֆորմյան ժամանակաշրջանում»[6]։ 60-ական թվականներին նույնիսկ միլիոն փթի չհասնող նավթարդյունահանությունը տարեցտարի աճելով, 1902 թ. հասնում է 637,7 միլիոն փթի։ «Համարյա ամբողջ նավթը,— գրում է Լենինը,— Բաքվի նահանգումն է ստացվում, և Բաքուն «չնչին քաղաքից դարձավ Ռուսաստանում առաջնակարգ արդյունաբերական կենտրոն՝ 112 հազար բնակչով»[7]։ Բաքվի բնակչության թիվը 1863 թ. 14 հազար էր, իսկ 1885 թ.՝ 45,7 հազար։ Այնուհետև, Լենինը ցույց է տալիս Կովկասի հանքարդյունաբերության մեջ զբաղված բանվորների թվի չափազանց արագ աճը։ 1877 թ. 3.431-ից 1890 թ. այն հասնում է մինչև 17.603 բանվորի, այսինքն ավելանում է հինգ անգամ[8]։

Վիճակագրական հարուստ նյութերի հիման վրա, Լենինը ջախջախում է նարոդնիկական տեսակետներն այն մասին, որ Ռուսաստանում բանվոր դասակարգը աննշան է աճում կամ նույնիսկ կրճատվում է բանվորների թիվը։

Վերլուծելով 1897 թ. առաջին մարդահամարի տվյալները, Վ. Ի. Լենինը ուշադրավ է համարում այն, որ Կովկասում այն ժամանակ մոտ կես միլիոն վարձու բանվորներ կային, երբ ամբողջ Ռուսաստանում նրանց քանակը կազմում էր մոտ 10 միլիոն[9]։

«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ ցույց է տրված Ռուսաստանի կապիտալիստների կողմից ծայրերկրների, մասնավորապես Կովկասի գաղութացման պրոցեսը։ Լենինը տնտեսագիտական իմաստով մատնանշում է գաղութի երկու հիմնական հատկանիշներ՝ ըստ Մարքսի. 1) չզբաղված, ազատ հողերի առկայության, որոնք դյուրամատչելի են գաղթողներին, և 2) աշխատանքի կազմավորված համաշխարհային բաժանման, համաշխարհային շուկայի առկայության, որի շնորհիվ գաղութները կարող են մասնագիտանալ գյուղատնտեսական մթերքների մասսայական արտադրության մեջ, դրանց փոխարեն ստանալով արդյունաբերական պատրաստի շինվածքներ, «որոնք այլ պայմաններում պետք է, որ իրենք պատրաստեին»։ Նշելով, որ Եվրոպական Ռուսաստանի հարավային ու արևելյան ծայրերկրները, որոնք բնակեցվում էին հետռեֆորմյան դարաշրջանում, աչքի են ընկնում գաղութի հենց վերոհիշյալ գծերով, Լենինն ավելացնում է, որ գաղութի այդ հասկացողությունը «էլ ավելի հարմարվում է մյուս ծայրերկրներին, օրինակ՝ Կովկասին»[10]։

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 635։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 635—636։

8 Նույն տեղում, էջ 636։

9 «Ленинский сборник», XXXIII, стр. 537.

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770։

Լենինը նշում է, որ Կովկասի «տնտեսական նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվում, քան քաղաքականը, իսկ տնտեսական այս նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ էլ»[11], այսինքն՝ մինչև 1908 թ., որովհետև իր գրքի երկրորդ հրատարակության մեջ ուղղումներ կատարելով, Լենինը այս մասի վերաբերյալ վերապահումներ չի անում[12]։

1899 թ. «Դարձյալ իրացման թեորիայի հարցի շուրջը» հոդվածում Լենինը նշում էր, որ «Եվրոպական Ռուսաստանի հարավը և հարավ-արևելքը, Կովկասը, Միջին Ասիան, Սիբիրը ծառայում են կարծես իբրև ռուսական կապիտալիզմի գաղութներ և ապահովում են նրա համար հսկայական զարգացում ոչ միայն գեպի խորքը, այլև լայնքով»[13]։

Վ. Ի. Լենինը բազմիցս մերկացրել է ցարիզմի գաղութային քաղաքականությունը Կովկասում։ Անդրկովկասի գյուղացիությունը սակավահողությունից ավելի էր նեղվում, քան Եվրոպական Ռուսաստանի խիտ բնակչություն ունեցող շրջանների գյուղացիությունը։ Այդ մասին Լենինը հանդամանորեն խոսում է «Վերաբնակեցման հարցը» հոդվածում, որը լույս է տեսել «Նեվսկայա զվեզդա» թերթում 1912 թ. հունիսին։ Ցույց տալով Կովկասում վերաբնակեցման քաղաքականության պատկերը, Լենինը նշում է, որ դեռևս XIX դարի 80-ականների պաշտոնական տվյալներով միայն պետական հողերի վրա բնակեցված պետական գյուղացիների մեջ, անդրկովկասյան չորս նահանգներում կար 22 000 շունչ բոլորովին հողազուրկ, 66 000 — մեկ շնչին մինչև մեկ դեսյատին հողաբաժիններով, 254000 մեկից մինչև երկու դեսյատին հողաբաժիններով, 5 013 շունչ երկուսից մինչև չորս դեսյատին հողաբաժիններով, ընդամենը մոտ 1 000 000 շունչ ավելի նվազ հողաբաժիններով, քան Կովկասում բնակեցվածներին հողաբաժին տալու մինիմալ նորման է[14]։ Ավելի վատ էր պատկերը Քութաիսի նահանգում։ Ըստ նորագույն տվյալների, ամենևին պետական հող չունեցող կամ դրանով սակավ ապահովված գյուղացիների թիվը չորս անդրկովկասյան նահանգներում կազմում էր մոտ 46 տոկոս, իսկ Քութաիսի նահանգում չապահովված ծխերը հաշվվում էին մոտ 33 տոկոս[15]։ Կոնկրետ փաստական նյութերի հիման վրա Լենինը ցույց է տալիս, որ Բաքվի, Թիֆլիսի, Քութաիսի, Ելիզավետպոլի նահանգներում և Ջիբրաիլի, Զանգեզուրի, Շուշու և Ջիվանշիրի, Լենքորանի, Ղուբայի գավառներում ցարական կառավարության վերաբնակեցման գիշատիչ քաղաքականության հետևանքով աճում է սակավահողությունը, տեղի է ունենում գյուղացիական տնտեսության

---

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 18։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 107։ Կովկասում կապիտալիզմի զարգացման և ցարիզմի գաղութային քաղաքականության մասին սովետական տնտեսագետների և պատմաբանների բազմաթիվ աշխատությունները կրկին հաստատում են այդ հարցերի մասին լենինյան վերլուծությունների գիտական խորությունն ու փաստարկումների ճշգրտությունը։ Դրանցից առավել ուշագրավ են Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ս. Սումբատզադեի „Промышленность Азербайджана в XIX в.“, դոկտոր պրոֆեսոր Պ. Վ. Գուգելչելու „Развитие промышленности в Грузии и Закавказье“, т. I, Հ. Ե. Թումանյանի „Экономическое развитие Армении“, ч, I (Ер., 1954), Մ. Հ. Ադոնցի «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին» (Երևան, 1968)։ այլ մենագրություններ։

14 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 105։

15 Տե՛ս նույն տեղում, էջ 106։

ների քայքայում։ Այն հարցին թե որտեղի՞ց է գոյանում գաղութացման հողային ֆոնդը Կովկասում և ինչո՞ւ արտագաղթ է կատարվում այնտեղ, փոխանակ տեղական գյուղացիների տարաբնակեցում կատարելու, Լենինը պատասխանում է, որ «վերաբնակեցման ֆոնդն ստեղծվում է բնիկների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով, իսկ վերաբնակեցումը Ռուսաստանից կատարվում է ի փառս «ծայրամասերի ռուսականացման» միևնույն նացիոնալիստական սկզբունքով»[16]։

Գաղութացման հողային ֆոնդ ստեղծելու համար ցարական իշխանությունների կողմից իրենց ընտելացած տեղերից բնիկների ամբողջ գյուղերը քշելը ոչ թե եզակի ու բացառիկ փաստեր էին, այլ տիպիկ դեպքեր։ Այս բոլորի հետևանքով, վերաբնակիչների ու տեղացիների միջև ստեղծվում էին ուղղակի թշնամական հարաբերություններ, ուժեղանում է արտագաղթը Ելիզավետոպոլ, Բաքվի նահանգներից ու Դաղստանի մարզից, Թիֆլիսի ու սևծովյան նավահանգիստներից, որտեղ անբավարար էին ջրամատակարարումն ու ոռոգումը, չկային պիտանի ճանապարհներ և անբարենպաստ էին կլիմայական պայմանները։

Լենինը մերկացնում է ցարիզմի և հակահեղափոխական կուսակցությունների հույսերը գյուղացիների վերաբնակեցման միջոցով լուծելու ագրարային հարցը, կանխելու գյուղացիական շարժման զարգացումը։ Որակելով դրանք որպես զուր հույսեր, «ձայն բարբառո հանապատի», Լենինը ցույց է տալիս Կովկասի գյուղական բնակչության շրջանում հեղափոխական տրամադրությունների աճը։

Ցարական կառավարության գաղութացման քաղաքականությունը վերջին հաշվով ուղղված էր թե՛ տեղական ժողովուրդների և թե՛ ռուս վերաբնակիչների դեմ,— այս էր Լենինի եզրակացությունը։ Կառավարության տիրապետող դասակարգերը,— գրում էր Լենինը,— «հետապնդելով քաղաքական նպատակներ, բոլորովին հաշվի չեն առնում ոչ վերաբնակվողների շահերը, ոչ էլ հնաբնակների իրավունքները»[17]։

Սակայն ցարիզմի հետադիմական, գիշատիչ քաղաքականությունը չէր կարող արգելափակել կապիտալիզմի զարգացումն ու տարածումը ծայրամասերում։ Լենինը ցույց է տվել, որ հետռեֆորմյան դարաշրջանում Կովկասը մի կողմից գաղութացմանն էր ենթարկում, իսկ մյուս կողմից՝ տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղում, ապրանքափողային հարաբերությունները ներթափանցում էին գյուղատնտեսության մեջ։ «Ընկնում էր եղջյուրներից գավաթներ պատրաստելը՝ Վրաստանի ֆեոդալական կարգի և նրա պատմական խնջույքների կործանման հետևանքով,— գրում էր Լենինը,— ընկնում էր գլխարկի արհեստագործությունը՝ ասիական զգեստը Եվրոպականով փոխարինելու հետևանքով. ընկնում էր տկերի ու կարասների արտադրությունը տեղական գինու համար, որն առաջին անգամ էր վաճառքի հանվում (զարգացնելով տակառագործական արտադրությունը) և իր հերթին նվաճում էր ռուսական շուկան»[18]։

---

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 108։

17 Նույն տեղում, էջ 110։

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 771։

Վ. Ի. Լենինը բացահայտել է Կենտրոնական Ռուսաստանի և Կովկասի տնտեսական ու քաղաքական մերձեցման պրոցեսը, որի հիման վրա տեղի էր ունենում կենտրոնի և ծայրամասերի պրոլետարիատի համախմբում։ Կապիտալիզմի զարգացման հիման վրա ամրապնդվող տնտեսական կապերը ուժեղացնում են ռուսական բանվոր դասակարգի ազդեցությունը Կովկասի արդյունաբերական կենտրոնների աճող պրոլետարիատի վրա։ Նույնը կատարվում էր նաև գյուղական բնակչության հետ, որը ներգրավվելով ընդհանուր կապիտալիստական հարաբերությունների մեջ, ավելի ու ավելի է սկսում գիտակցել, որ իրենց ընդհանուր թշնամին ռուսական ցարիզմն ու կալվածատերերն են, ճորտատիրության մնացորդները։

Խոսելով այս մասին Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ նշել է. «...Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավել էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբում նոսր բնակված կամ համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս կանգնած լեռնականներով բնակված երկիրը դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտրականների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր»[19]։

Կապիտալիզմի զարգացման հետևանքով, Անդրկովկասում առաջանում են արդյունաբերական խոշոր կենտրոններ, ձևավորվում է բանվոր դասակարգը։ Վ. Ի. Լենինը նշում է, որ Կովկասի ամբողջ բնակչությունը 1851 թ. մինչև 1897 թ. աճել է 95 տոկոսով[20]։ 1897 թ. Կովկասի քաղաքային բնակչության թիվը հասնում էր 900 հազարի։ Առանձնապես ուժեղ թափով է զարգանում Բաքուն, որտեղ կենտրոնանում են Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր վայրերից եկած ադրբեջանցի, հայ, վրացի, ռուս և այլ ազգի տասնյակ հազարավոր բանվորներ։ XX դ. սկզբին Բաքուն արդեն ուներ 260 հազար բնակիչ, որից 65 հազարը բանվոր էին։ Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության զարգացման հետևանքով աճում էր նաև Թիֆլիսի, Բաթումի, Փոթիի բնակչությունը։ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը Ռուսաստանին միացվելուց հետո Թիֆլիսը դառնում է Անդրկովկասի ոչ միայն վարչական, այլ նաև կուլտուրական կենտրոնը, որտեղ գտնվում էին երկրամասի գրական ու գրական ամենախոշոր ուժերը։

Թիֆլիսի բնակչության թիվը 1886 թ. 78.445-ի դիմաց, 1897 թ. հասնում է 160.645-ի, 1903 թ. Բաթումն արդեն ուներ 35 հազար բնակիչ՝ 1878 թ. 3 հազարի դիմաց։ Ալեքսանդրապոլի բնակչության թիվը 1865 թ. 16.814 էր, 1897 թ. 30.616, իսկ 1914 թ. 51.316։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանում, Անդրկովկասում հանդես են գալիս արդյունաբերական նոր կենտրոններ՝ Չիաթուրի, Թքվիբուլի, Ալավերդի, Ղափան, Գետաբեկ, Նուխի, Շուշի և այլն։

Կապիտալիզմի զարգացումը Կովկասում առանձնապես կապվում էր երկաթուղային շինարարության հետ, որն սկսվում է 1865 թ.։ Կենտրոնից դեպի ծայրամասերն էին ձգվում երկաթուղիները։ Փոթի—Թիֆլիս երկաթուղու շինա-

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, էջ 772։

բարությունից (1872) հետո, 1883 թ. շահագործման են հանձնվում Բաքու—Բաթումի և Սամտրեդի—Բաթումի երկաթուղիները։ Մեկ տարի հետո Վլադիկավկազը երկաթուղով միացվում է Պետրովսկու հետ և նրա միջոցով՝ Բաքվին։ 1898—1906 թթ. կառուցվում են Թիֆլիս—Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ—Կարս—Սարիղամիշ, Ալեքսանդրապոլ—Երևան, իսկ 1908 թ. Երևան—Ջուլֆա երկաթուղագծերը։ Երկաթուղային հաղորդակցությունը իրար էր կապում Կովկասի զանազան շրջանները, կապիտալիզմն իր հունի մեջ է գրավում ինքնամփոփ տնտեսություն վարող գյուղերը, քայքայում գյուղացիներին և ուժեղացնում դասակարգային շերտավորումը։

Քաղաքում և գյուղում կապիտալիզմի զարգացման հետևանքով սրվում են սոցիալական հակասությունները։ Բանվորները և աշխատավոր գյուղացիները ապրում էին անտանելի պայմաններում։ Բանվորների աշխատանքային օրը տևում էր 12—16 ժամ, իսկ աշխատավարձն այնքան չնչին էր, որ հազիվ էր բավականացնում աղքատիկ սննդի համար։ «Մենք հիմա միայն հացի և ջրի փող ենք վաստակում, որպեսզի քաղցից չմեռնենք, որպեսզի ի վիճակի լինենք հարստություն ստեղծել ոչ թե մեզ, այլ ուրիշների համար»,— գրում էին Բաթումիի բանվորները 1901 թ.[21]*։ Չափազանց ծանր էին բանվորների կենցաղային պայմանները, նրանք քաղաքականապես իրավազուրկ էին և կախված ձեռնարկատերերի քմահաճույքից։*

Վ. Ի. Լենինը մերկացրել է կապիտալիստական հասարակարգի խոցերը, քաղաքի և գյուղի սոցիալական խորը հակասությունները։ 1901 թ. օգոստոսին «Իսկրա»-ում տպագրված «Ճգնաժամի դասերը» հոդվածում ցույց է տրվում մի խումբ կապիտալիստների կողմից տասնյակ հազարավոր բանվորների դաժան շահագործումը։ Այդ ապացուցելու համար կոնկրետ օրինակներ է բերվում նաև Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկություններից։ «Եղբ.-Նոբելների նավթային արդյունաբերության ընկերությունը»,— գրում էր Լենինը,— «պահվում է տասնյակ և հարյուր հազարավոր բանվորների միավորված աշխատանքով, որոնք զբաղված են նավթի հանույթով, նրա վերամշակմամբ, նրա առաքումով, նավթամուղներով, երկաթուղիներով, ծովերով և գետերով, որոնք զբաղված են սրա համար անհրաժեշտ մեքենաների, պահեստների, նյութերի, բեռնանավերի, շոգենավերի կառուցումով և այլն։ Այս բոլոր տասնյակ հազարավոր բանվորներն աշխատում են ամբողջ հասարակության համար, իսկ նրանց աշխատանքը տնօրինում են մի բուռ միլիոներներ, որոնք իրենց համար են յուրացնում մասսաների այս կազմակերպված աշխատանքի բերած ամբողջ շահույթը»[22]*։*

Լենինը նշում է, որ Նոբել ընկերությունը 1899 թ. ստացել է զուտ շահույթ՝ 4 միլիոն ռուբլի, իսկ 1900 թ.՝ 6 միլիոն ռուբլի[23]*։*

Լենինն այս անվանում է կատաղի մրցավազք անծանոթ շուկայում տեղ գրավելու համար։

Վերլուծելով Կովկասի սոցիալ-քաղաքական պայմանները, Լենինը տեսնում էր բազմազգ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, բանվորների և գյուղացիների պատմական բախտի ընդհանրությունը, հետևաբար նաև համատեղ

---

21 *«Իսկրա», № 16, 1 փետրվարի 1902 թ.։*

22 *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 114։*

23 *Տե՛ս նույն տեղում։*

ՊԼ-11240.

պայքարի անհրաժեշտությունը ընդհանուր թշնամու՝ ցարիզմի, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։

Ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր։ 1897 թ. մարդահամարի տվյալներով նրա տերիտորիայում ապրում էին 125,7 միլիոն բնակիչ։ Ըստ ազգային կազմի, նրանք ներկայացնում էին հետևյալ պատկերը. ռուսներ՝ 44,3 տոկոս, ուկրաինացիներ՝ 17,8, լեհեր՝ 6,3, բելոռուսներ՝ 4,7, հրեաներ՝ 4, կիրգիզներ՝ 3,4, թաթարներ՝ 3, գերմանացիներ՝ 1,4, լիտվացիներ՝ 1, լատիշներ՝ 1,1, բաշկիրներ՝ 1, հայեր՝ 09, վրացիներ՝ 09 տոկոս և այլն։

Ցարական ինքնակալությունը դաժանորեն ճնշում էր այդ ժողովուրդներին, նրանց ենթարկում ամեն տեսակի շահագործման, ստորացման ու վիրավորանքի։ «Ցարական չինովնիկները դատ ու դատաստան էին անում նրանց նկատմամբ,— ասված է Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմության դասագրքում,— ոչ ռուս ժողովուրդների ազգային կուլտուրան ենթարկվում էր դաժան հալածանքների։ Շատ ժողովուրդների արգելում էին թերթեր ու գրքեր հրատարակել, երեխաներին սովորեցնել մայրենի լեզվով։ Բնակչությունն արևելքում ամբողջովին անգրագետ էր։ Ցարական կառավարությունը դիտավորյալ կերպով ազգային թշնամանք էր հրահրում, ոչ ռուս ժողովուրդներին պաշտոնապես անվանում էր «այլազգիներ», ջանում էր ռուսների մեջ արհամարհանք պատվաստել նրանց նկատմամբ՝ որպես ստորին ռասայի։ Ցարական իշխանությունները մի ժողովրդի գրգռում էին մյուսի դեմ։ Կազմակերպվում էին հրեական ջարդեր, կոտորած հայերի և ադրբեջանցիների միջև։ Ցարիզմը ոչ ռուս ժողովուրդների դահիճն էր ու տանջողը»[24]։

Վ. Ի. Լենինը իր աշխատություններում մերկացնում էր ցարիզմի գաղութարարական քաղաքականությունը, ցույց տալիս, որ կապիտալիզմի և նրա բարձրագույն էտապի՝ իմպերիալիզմի էպոխայում մյուս հակասությունների հետ միասին, ավելի են սրվում նաև հակասությունները ցարական ինքնակալության և ճնշված ժողովուրդների միջև։ «Աշխարհում ոչ մի տեղ չկա երկրի բնակչության մեծամասնության այնպիսի ճնշում, ինչպես Ռուսաստանում,— գրել է Վ. Ի. Լենինը 1915 թ. — վելիկոռուսները կազմում են բնակչության 43 տոկոսը միայն, այսինքն կեսից պակաս, իսկ բոլոր մնացածներն իրավազուրկ են, որպես այլազգիներ։ Ռուսաստանի 170 միլիոն բնակչությունից մոտ 100 միլիոնը ճնշված են ու իրավազուրկ»[25]։

Ազգային ծայրամասերի աշխատավորությունը գտնվում էր եռակի ճնշման տակ—ռուսական ինքնակալության, վելիկոռուսական իմպերիալիստական բուրժուազիայի և «սեփական» ազգային շահագործողների։ Ահա այս նկատի ուներ Վ. Ի. Լենինը, երբ մերկացնելով բոլոր տեսակի շահագործողներին, 1915 թ. իր «Հեղափոխական պրոլետարիատը և ազգերի ինքնորոշման իրավունքը» հոդվածում գրում էր. «Ռուսաստանը ժողովուրդների բանտ է ոչ միայն ցարիզմի ռազմա-ֆեոդալական բնույթի շնորհիվ, ոչ միայն այն պատճառով, որ վելիկոռուսական բուրժուազիան պաշտպանում է ցարիզմը, այլև այն պատճառով, որ լեհական և այլ բուրժուազիան կապիտալիստական էքսպանսիայի շահերին զոհաբերել է ազգերի ազատությունը, ինչպես և դեմոկրատիզմն ընդհանրապես։ Ռուսաստանի պրոլետարիատը չի կարող ո՛չ գլխավորել ժողովրդին դեպի հաղ-

24 Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմություն, Երևան, 1959 թ., էջ 15—16։

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 388։

թական դեմոկրատական ռևոլյուցիա (այդ է նրա մոտակա խնդիրը), ո՛չ պայքարել իր եղբայրների՝ Եվրոպայի պրոլետարների հետ միատեղ՝ սոցիալիստական ռևոլյուցիայի համար, չպահանջելով հենց այժմ լրիվ և «rückhaltlos, ցարիզմի կողմից կեղեքվող բոլոր ազգերի՝ Ռուսաստանից անջատվելու ազատությունը»[26]։

Այսպիսի պայմաններում բանվոր դասակարգը չէր կարող հաղթել ցարիզմին և կապիտալիզմին, առանց ճիշտ ազգային քաղաքականության։ Ահա թե ինչու դեռևս իր գործունեության վաղ շրջանից, Վ. Ի. Լենինը խորապես զբաղվում էր բազմազգ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հեղափոխական-ազատագրական պայքարի հարցերով։ Հենվելով Մարքսի և Էնգելսի գաղափարների վրա, Վ. Ի. Լենինը մշակում է բոլշևիկների կուսակցության ծրագիրն ու քաղաքականությունը ազգային հարցում, որը հանդիսանալով սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսության անբաժան մասը, դիտվում էր որպես պրոլետարիատի ռեզերվների հարց՝ իշխանության համար նրա մղած պայքարում։ Վ. Ի. Լենինը միշտ ընդգծում էր, որ միայն բանվոր դասակարգն է ազգային ամեն տեսակի ճնշման վճռական ու մինչև վերջ հետևողական թշնամին, որ Ռուսաստանի ճնշված ժողովուրդները իրենց ազգային ու սոցիալական ազատագրությանը կարող են հասնել միայն բանվոր դասակարգի հետ դաշնակցած և նրա ղեկավարությամբ։ Դեռևս 1897 թ. «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» աշխատության մեջ, Վ. Ի. Լենինը նշում էր, որ ռուսական բանվոր դասակարգը իր քաղաքական պայքարում միայնակ չէ, որ նա ունի իր դաշնակիցները, նրա հետ կողք-կողքի կանգնած են նաև ճնշված ժողովուրդները[27]։ Վ. Ի. Լենինը խնդիր էր դնում պրոլետարիատի ղեկավարությամբ նրա շուրջը համախմբել աշխատավոր ու շահագործվող մասսաներին, ռուսական ինքնակալության կողմից ճնշված ու հետապնդվող բոլոր ժողովուրդներին։

Այսպիսով, դեռևս XX դարի շեմին Վ. Ի. Լենինը գիտականորեն վերլուծել ու բացահայտել է հետոհեֆորմյան ժամանակաշրջանում Անդրկովկասի սոցիալ-հաղաքական կյանքի հատուկ պայմանները, որոնք երկրամասում հեղափոխական շարժումների և կուսակցական կազմակերպությունների զարգացման հիմքն էին կազմում։

Այդ հատուկ պայմանները բնորոշող գծերն էին.

1. Անդրկովկասը Ռուսաստանի ծայրամասն էր, բայց տարբեր կենտրոնից՝ իր ազգագրական, պատմական, տնտեսական ու կուլտուրական զարգացմամբ։

2. Անդրկովկասը ցարական Ռուսաստանի գաղութն էր, որը բիրտ ճնշման ու կեղեքման էր ենթարկվում ցարիզմի, կալվածատերերի ու ռուսական բուրժուազիայի կողմից։

3. Ռուսաստանի համեմատությամբ Անդրկովկասը տնտեսապես ավելի հետամնաց էր։ Բացի, մասնավորապես, Բաքվից, ապա Թիֆլիսից ու Բաթումից, ուր կապիտալիզմն ավելի զարգացած էր և հետևապես բանվոր դասակարգն ավելի ուժեղ, այստեղի մյուս վայրերում գերակշռում էին գյուղացիական հետամնաց տնտեսությունները՝ ճորտատիրական կացութաձևի ամուր

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 524։
27 Նույն տեղում, էջ 420—421։

մնացորդներով։ Քաղաքային պրոլետարիատը բնակչության մյուս խավերի համեմատությամբ խիստ ցածր տոկոս էր կազմում։

4. Անդրկովկասը Ռուսաստանի ամենաբազմազգ երկրամասն էր, որտեղ միմյանց հետ խառը ապրում էին վրացիներ, հայեր, ադրբեջանցիներ, ռուսներ, աբխազներ, լեզգիներ և այլ ազգեր ու ժողովուրդներ։ Նրանք գտնվում էին զարգացման տարբեր աստիճանների վրա, ունեին պատմական, տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման տարբեր մակարդակ և ազգային-ազատագրական շարժման յուրահատուկ ու հարուստ տրադիցիաներ։

5. Ռուսաստանին միանալու հետևանքով, Անդրկովկասը սերտորեն կապվել էր ավելի առաջավոր երկրի հետ, իսկ նրա ժողովուրդները դարձել էին ռուս ժողովրդին բախտակից, նրա ազատագրական, հեղափոխական շարժման ակտիվ մասնակիցները։

6. Անդրկովկասի պրոլետարիատը Ռուսաստանի բանվոր դասակարգի մի անբաժան մասն էր։ Նա ձևավորվել էր հողազուրկ գյուղացիներից, որոնք աշխատանք փնտրելով, կենտրոնացել էին Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում և երկրամասի այլ խոշոր քաղաքներում։ Այստեղի ֆաբրիկաներում և գործարաններում աշխատելու էին գալիս նաև Ռուսաստանի կենտրոնական նահանգներից հողազուրկ գյուղացիներն ու որակյալ բանվորները։ Անդրկովկասի արդյունաբերական պրոլետարիատը հենց սկզբից բազմազգ էր, կազմված հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս, դաղստանցի, պարսիկ և այլ ազգի աշխատավորներից։ Անդրկովկասի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի գրոշակակիրն ու ղեկավարը Բաքվի բազմազգ պրոլետարիատն էր, որի շարքերում կոփվում էին երկրամասի բոլոր ազգերի աշխատավորության ներկայացուցիչները։

Անդրկովկասի ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրումը հնարավոր էր միայն Ռուսաստանի ողջ պրոլետարիատի համատեղ ջանքերով ու ղեկավարությամբ ռուսական ցարիզմի ու բուրժուազիայի տապալման միջոցով։